

Կազմված է 26.11.2016թ.

Տպագրված է 2 օրինակից
Օրինակ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետական
կուսակցության 16-րդ հանագումարի
որոշմամբ
26 նոյեմբերի 2016թ.

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կոլեգիայի 14.05.1991թ.
29/1 որոշմամբ
Հարկ վճարողի հաշվառման համար 02522594
Նոր խմբագրությամբ կանոնադրությունը
Գրանցված է

Հայաստանի Հանրապետական
կուսակցության նախագահ

ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի
կողմից 17.02.2003թ.
Գրանցման համար 211.172.01602
Վկայական 03Ա058514
26.12.2009թ. գրանցված կանոնադրության
Թիվ 005-2 փոփոխությունը
Գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
« » 201 թ.

Սերժ Ազատի Սարգսյան

ՀՀ Պետական ռեգիստրի
գործակալության պետ

Գարուշ Դավթյան

Հայաստանի Հանրապետական
կուսակցություն

Կանոնադրություն
(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2016

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (այսուհետև՝ կուսակցություն) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենքների և իրավական ակտերի, սույն կանոնադրության, ինչպես նաև իր ծրագրի հիման վրա:

1.2. Կուսակցությունը գործում է ժողովրդավարության, հրապարակայնության, թափանցիկության և նախաձեռնությունների ազատ դրսևորման սկզբունքներով, հանդիսանում է իրավաբանական անձ, օգտվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ընձեռված բոլոր իրավունքներից և կրում դրանցով սահմանված պարտականություններ:

1.3. Կուսակցությունը ձգտում է ՀՀ Սահմանադրության և օրենքների շրջանակներում ժողովրդավարական ընտրությունների միջոցով ապահովել իր ներկայացվածությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և այդ ճանապարհով մասնակցել պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը և պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

1.4. Կուսակցության անվանումն է՝

- հայերեն՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն (հապավումը՝ ՀՀԿ),
- ռուսերեն՝ Республиканская партия Армении (հապավումը՝ РПА),
- անգլերեն՝ Republican Party of Armenia (հապավումը՝ RPA):

1.5. Կուսակցությունն ունի դրոշ, խորհրդանշան, ձևաթուղթ, կլոր կնիք, բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժույթով:

1.6. Կուսակցության դրոշը՝ սպիտակ, լայնության և երկարության չափերի 1:1.6 հարաբերակցությամբ, ոսկեգույն ծոպքերով պաստառ է, որի կենտրոնում պատկերված է ՀՀԿ խորհրդանշանը՝ 0,5 տրամագծով՝ լայնության հարաբերակցությամբ:

1.7. ՀՀԿ խորհրդանշանը կարմիր հիմնագույնով հայկական ավանդական հավերժանշանն է՝ ութ թերթիկներով, աջ պտույտով, կենտրոնում սուր և թևերը տարածած արծիվ:

1.8. ՀՀԿ խորհրդանշանը պատկերվում է ՀՀԿ դրոշի, կնիքի, ձևաթղթի, կրծքանշանի և անհատականացման մյուս միջոցների վրա:

1.9. Կուսակցության իրավաբանական հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կուսակցությունն իր գործունեության նպատակները և խնդիրներն է համարում՝

- հայոց ազգային անկախ պետականության ամրապնդմանը, զարգացմանը և ազգային խնդիրների լուծմանը մասնակցելը.
- ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կերտումը.
- հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցելը.
- իշխանությունների կազմավորման գործընթացին և պետության կառավարմանը մասնակցելը.
- ՀՀ քաղաքական համակարգի կայունացմանը, զարգացմանը և ամրապնդմանը նպաստելը.
- քաղաքացիական հասարակության կառուցմանը և քաղաքացիական ինստիտուտների հզորացմանն ու ժողովրդավարացմանն օժանդակելը:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍԸ

3.1. Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և չի հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ: Կուսակցության անդամ չեն կարող լինել օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և այն անձինք, ովքեր «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ:

3.2. Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անհատական կարգով, անձնական դիմումի համաձայն՝

- կուսակցության շրջանային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության տարածքային կազմակերպության խորհրդի որոշմամբ,
- կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ:

3.3. Կուսակցության անդամը հաշվառվում է կուսակցության որևէ սկզբնական կազմակերպությունում:

3.4. Կուսակցության անդամը կամավոր մուծում է անդամավճար, բայց ոչ ավել քան օրենքով սահմանված չափը:

3.5. Եթե ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով կուսակցությանն անդամակցությունն

անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է կուսակցության անդամի դիմումի հիման վրա, կուսակցության կազմակերպչական հանձնաժողովի որոշմամբ: Կասեցումը հանվում է նույն կարգով:

3.6. Կուսակցության անդամն իրավունք ունի՝

- ընտրել և ընտրվել կուսակցության տարածքային (սկզբնական, շրջանային, տարածքային) ու ոլորտային ստորաբաժանումների (կանանց, երիտասարդական, մարզական և այլն), վերահսկողություն իրականացնող, ինչպես նաև ներկայացուցչական և ղեկավար մարմիններում (համագումար, գործադիր մարմին)։
- տեղեկատվություն ստանալ կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ. վերահսկողություն իրականացնել նրանց գործունեության նկատմամբ։
- կուսակցության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ։
- մասնակցել այն ժողովին կամ նիստին, որտեղ քննարկվում է նրա անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ։
- դուրս գալ կուսակցության շարքերից՝ իր դիմումի համաձայն։
- բողոքարկել կուսակցության սկզբնական, շրջանային և տարածքային կազմակերպությունների ղեկավար մարմինների, կուսակցության ղեկավար մարմինների որոշումներն ու գործողությունները կուսակցության վերադաս մարմիններում։
- կասեցնել և վերականգնել իր անդամակցությունը կուսակցությանը։
- օգտվել օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից։

3.7. Կուսակցության անդամը պարտավոր է՝

- գործել կուսակցության կանոնադրության շրջանակներում։
- կատարել կուսակցության համագումարի, վերադաս մարմինների որոշումները և ծրագրային դրույթները։
- մասնակցել սկզբնական կազմակերպության ժողովներին և միջոցառումներին։
- կատարել օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ։

3.8. Կուսակցությանն անդամակցությունը դադարում է՝

- դիմումի համաձայն՝ կուսակցությունից դուրս գալու դեպքում.
- կուսակցությունից հեռացվելու դեպքում.
- մահվան դեպքում.
- կուսակցության լուծարման դեպքում:

3.9. Խրախուսման միջոցները.

Կուսակցությունը կարող է պարգևատրել՝

- շնորհակալագրով.
- պատվոգրով.
- հուշամեդալով, հուշանվերով կամ դրամական պարգևով.
- կարգապահական տույժի հանումով:

3.10. Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները կամ վերադաս մարմինների որոշումները չկատարելու դեպքում կուսակցականը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝

- նկատողություն.
- խիստ նկատողություն.
- կուսակցությունից հեռացում.

3.11. Կուսակցության անդամներին կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել սկզբնական կազմակերպության ժողովը կամ կազմակերպչական հանձնաժողովը: Տարածքային և շրջանային խորհուրդների անդամներին կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել համապատասխան խորհուրդը կամ կազմակերպչական հանձնաժողովը, իսկ ներկայացուցչական և ղեկավար մարմինների անդամներին կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկել միայն գործադիր մարմինը:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կուսակցության տարածքային ստորաբաժանումներն են՝ սկզբնական կազմակերպությունները, շրջանային կազմակերպությունները և տարածքային կազմակերպությունները, որոնց գործունեությունը կազմակերպվում է տարածքային հատկանիշով: Կուսակցությունը չունի կառուցվածքային ստորաբաժանումներ:

4.2. Կուսակցության կառուցվածքային հիմքը կուսակցության սկզբնական կազմակերպություններն են, որոնք տեղերում իրականացնում են կուսակցության քաղաքականությունը: Սկզբնական կազմակերպությունը բաղկացած է առնվազն 15

անդամից: Սկզբնական կազմակերպության նախագահն ի պաշտոնե շրջանային խորհրդի անդամ է, իսկ դրա բացակայության դեպքում՝ տարածքային խորհրդի անդամ: Սկզբնական կազմակերպությունը ստեղծվում է տարածքային հատկանիշով: Սկզբնական կազմակերպություն կարող են ձևավորել՝

- կուսակցության գործադիր մարմինը.
- կուսակցության կազմակերպչական հանձնաժողովը.
- կուսակցության տարածքային խորհուրդը.
- կուսակցության շրջանային խորհուրդը:

4.3. Սկզբնական կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ժողովների հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման միջոցով:

4.4. Սկզբնական կազմակերպության ժողովը հրավիրվում է երեք ամիսը մեկ անգամ: Ժողովը հրավիրում է կազմակերպության նախագահը: Ժողով կարող է հրավիրել նաև կազմակերպության անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով կազմակերպության անդամներին: Կազմակերպության ժողովն օրինական է, եթե ժողովին մասնակցում է կազմակերպության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ: Ժողովը ընտրում է սկզբնական կազմակերպության նախագահ և տեղակալներ, համակարգում և վերահսկում է սկզբնական կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հաստատում է սկզբնական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոշում է վերադաս մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցության կարգը, ապահովում է կապը այլ սկզբնական, շրջանային և տարածքային կազմակերպությունների հետ:

4.5. Սկզբնական կազմակերպության ժողովն ընտրում է կազմակերպության նախագահ և նախագահի երկու տեղակալներ, չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Սկզբնական կազմակերպության նախագահը համակարգում է սկզբնական կազմակերպության գործունեությունը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է սկզբնական կազմակերպության հերթական և արտահերթ ժողովներ, ապահովում է սկզբնական կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու վերադաս մարմինների որոշումներին համապատասխան: Սկզբնական կազմակերպության նախագահի տեղակալներն իրականացնում են կազմակերպության նախագահի հանձնարարականները, նրանցից մեկը նախագահի հանձնարարականի հիման վրա փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ: Կազմակերպության

նախագահի կամ տեղակալների լիազորությունները սկզբնական կազմակերպության ժողովի որոշմամբ կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ սկզբնական կազմակերպության անդամների թվի կեսից ավելիի ձայներով: Կազմակերպության նախագահի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև վերջինիս բացակայության դեպքում նրա պարտականություններն իրականացնում է նախագահի տարիքով ավագ տեղակալը:

4.6. Սկզբնական կազմակերպությունը հաշվետու է կուսակցության շրջանային խորհրդին, իսկ դրա բացակայության դեպքում՝ տարածքային խորհրդին: Սկզբնական կազմակերպության տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացնում է կազմակերպության նախագահը, յուրաքանչյուր հաջորդող տարվա հունվար ամսին:

Կուսակցության հերթական համագումարից ոչ ուշ, քան 25 օր առաջ սկզբնական կազմակերպությունը գումարում է հաշվետու ընտրական ժողով և կատարում է կազմակերպության նախագահի և տեղակալների ընտրություն:

4.7. Սկզբնական կազմակերպությունն իր դրամական միջոցները (անդամավճարներ, նվիրատվություն) փոխանցում է կուսակցության շրջանային խորհրդին, իսկ դրա բացակայության դեպքում՝ տարածքային խորհրդին: Սկզբնական կազմակերպությունը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը ներկայացնում է շրջանային խորհրդին, իսկ դրա բացակայության դեպքում՝ տարածքային խորհրդին:

4.8. Այն սկզբնական կազմակերպությունը, որի նախագահն ընտրվում է շրջանային, իսկ դրա բացակայության դեպքում՝ տարածքային խորհրդի նախագահ կամ տեղակալ, ընտրում է նոր նախագահ:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են կուսակցության շրջանային կազմակերպություններ, որոնց գործունեության տարածքային տիրույթը սահմանում է գործադիր մարմինը: Շրջանային խորհուրդը շրջանային կազմակերպության ղեկավար մարմինն է, կազմավորվում է սկզբնական կազմակերպությունների նախագահներից: Շրջանային խորհուրդը ընտրում է շրջանային խորհրդի նախագահ և տեղակալներ, համակարգում և վերահսկում է շրջանային կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հաստատում է շրջանային կազմակերպության տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոշում է վերադաս մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցության կարգը, ապահովում է կապը այլ սկզբնական, շրջանային և տարածքային կազմակերպությունների հետ:

5.2. Կուսակցության շրջանային խորհրդի նախագահը և նրա երկու տեղակալներն ընտրվում են կուսակցության շրջանային խորհրդի կողմից, շրջանային խորհրդի անդամների կազմից, չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝

ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Շրջանային կազմակերպության նախագահը համակարգում է շրջանային կազմակերպության գործունեությունը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է շրջանային կազմակերպության խորհրդի հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է շրջանային կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու վերադաս մարմինների որոշումներին համապատասխան: Շրջանային կազմակերպության նախագահի տեղակալներն իրականացնում են կազմակերպության նախագահի հանձնարարականները, նրանցից մեկը նախագահի հանձնարարականի հիման վրա փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ: Շրջանային խորհրդի որոշմամբ կարող է կատարվել շրջանային խորհրդի նախագահի և տեղակալների վաղաժամկետ ընտրություն: Շրջանային խորհրդի նախագահի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև վերջինիս բացակայության դեպքում նրա պարտականություններն իրականացնում է նախագահի տարիքով ավագ տեղակալը: Կուսակցության հերթական համագումարից ոչ ուշ, քան 20 օր առաջ կատարվում է շրջանային խորհրդի նախագահի և նրա տեղակալների ընտրություն:

5.3. Կուսակցության շրջանային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է խորհրդի նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման միջոցով:

5.4. Կուսակցության շրջանային խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը: Նիստ կարող է հրավիրել նաև խորհրդի անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով խորհրդի անդամներին: Նիստն օրինական է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

5.5. Կուսակցության շրջանային խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է տարածքային խորհրդին: Տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է կուսակցության շրջանային խորհրդի նախագահի կողմից՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա փետրվար ամսվա վերջին:

5.6. Կուսակցության շրջանային խորհուրդն իր դրամական միջոցները փոխանցում է տարածքային խորհրդին: Կուսակցության շրջանային խորհուրդը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է տարածքային խորհրդին:

5.7. Կուսակցության շրջանային խորհուրդն իրավունք ունի կուսակցության սկզբնական կազմակերպությունը լուծարելու հարց բարձրացնել կուսակցության տարածքային խորհրդի առջև:

5.8. Այն շրջանային խորհուրդը, որի նախագահը կամ տեղակալն ընտրվում է տարածքային խորհրդի նախագահ կամ տեղակալ, ընտրում է նոր նախագահ կամ տեղակալ:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են կուսակցական տարածքային կազմակերպություններ: Տարածքային խորհուրդը տարածքային կազմակերպության ղեկավար մարմինն է, կազմավորվում է մարզի տարածքում գործող շրջանային խորհրդի նախագահներից և նրանց տեղակալներից: Տարածքային խորհուրդը ընտրում է տարածքային խորհրդի նախագահ և տեղակալներ, համակարգում և վերահսկում է տարածքային կազմակերպության ընդհանուր գործունեությունը, հաստատում է տարածքային կազմակերպության տարեկան հաշվետվությունները և աշխատանքային ծրագրերը, իրականացնում է իր աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոշում է վերադաս մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցության կարգը, ապահովում է կապը այլ սկզբնական, շրջանային և տարածքային կազմակերպությունների հետ:

6.2. Կուսակցության տարածքային խորհրդի նախագահը և նրա երկու տեղակալներն ընտրվում են կուսակցության տարածքային խորհրդի կողմից, տարածքային խորհրդի անդամների կազմից, չորս տարի ժամկետով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Տարածքային կազմակերպության նախագահը համակարգում է շրջանային կազմակերպության գործունեությունը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում, հրավիրում է տարածքային կազմակերպության խորհրդի հերթական և արտահերթ նիստեր, ապահովում է տարածքային կազմակերպության բնականոն աշխատանքները՝ կուսակցության կանոնադրության և ծրագրի ու վերադաս մարմինների որոշումներին համապատասխան: Տարածքային կազմակերպության նախագահի տեղակալներն իրականացնում են կազմակերպության նախագահի հանձնարարականները, նրանցից մեկը նախագահի հանձնարարականի հիման վրա փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ: Տարածքային խորհրդի որոշմամբ կարող է կատարվել տարածքային խորհրդի նախագահի և տեղակալների վաղաժամկետ ընտրություն: Տարածքային խորհրդի նախագահի պաշտոնը թափուր մնալու, ինչպես նաև վերջինիս բացակայության դեպքում նրա պարտականություններն իրականացնում է նախագահի տարիքով ավագ տեղակալը: Կուսակցության հերթական համագումարից ոչ ուշ, քան 15 օր առաջ տարածքային խորհուրդը կատարում է տարածքային խորհրդի նախագահի և տեղակալների ընտրություն:

6.3. Կուսակցության տարածքային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է խորհրդի նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման միջոցով:

6.4. Կուսակցության տարածքային խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրում է խորհրդի նախագահը: Նիստ կարող է հրավիրել նաև խորհրդի անդամների առնվազն 1/3-ը՝ ոչ ուշ, քան երեք օր առաջ օրակարգի մասին տեղյակ պահելով խորհրդի անդամներին: Նիստն

օրինական է, եթե մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 1/2-ը: Տարածքային խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Գաղտնի քվեարկությունն անցկացվում է ներկաների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

6.5. Կուսակցության տարածքային խորհուրդն իր գործունեության մասին հաշվետու է կուսակցության գործադիր մարմնին: Տարեկան գործունեության մասին հաշվետվությունը ներկայացվում է կուսակցության տարածքային խորհրդի նախագահի կողմից՝ յուրաքանչյուր հաջորդող տարվա մարտ ամսվա ընթացքում:

6.6. Կուսակցության տարածքային խորհուրդը համակարգում և վերահսկում է շրջանային կազմակերպությունների աշխատանքները: Կուսակցության տարածքային խորհուրդը կարող է կազմալուծել կուսակցության սկզբնական կազմակերպությունը՝ իր նախաձեռնությամբ կամ կուսակցության շրջանային կազմակերպության առաջարկով: Կուսակցության տարածքային խորհուրդը կուսակցության շրջանային կազմակերպության կազմալուծման հարցը կարող է ներկայացնել կուսակցության գործադիր մարմնին:

6.7. Կուսակցության տարածքային խորհուրդն իր դրամական միջոցները փոխանցում է կուսակցության դրամարկղ: Կուսակցության տարածքային խորհուրդը կուսակցության կողմից հատկացված դրամական միջոցների ծախսերի մասին հաշվետվությունը տարեկան մեկ անգամ ներկայացնում է գործադիր մարմնին:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Երևան քաղաքի վարչական շրջաններում ստեղծվում են կուսակցության տարածքային կազմակերպություններ, իսկ գործադիր մարմնի որոշմամբ՝ նաև կուսակցության շրջանային կազմակերպություններ:

7.2. Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքային խորհուրդները կազմավորվում են վարչական տարածքում գործող շրջանային խորհրդի նախագահներից և տեղակալներից, իսկ դրա բացակայության դեպքում՝ սկզբնական կազմակերպությունների նախագահներից:

7.3. Երևան քաղաքում տարածքային հատկանիշով ստեղծվում են սկզբնական կազմակերպություններ, որոնք հաշվետու են շրջանային խորհրդին, իսկ դրա բացակայության դեպքում՝ տարածքային խորհրդին:

7.4. Սկզբնական կազմակերպությունն իր դրամական միջոցները (անդամավճարներ, նվիրատվություն) փոխանցում է կուսակցության շրջանային խորհրդին, այդպիսիք կազմավորված չլինելու դեպքում՝ տարածքային խորհրդին:

7.5. Կուսակցության Երևան քաղաքի տարածքային խորհուրդն իրավունք ունի

կուսակցության շրջանային խորհուրդը կամ սկզբնական կազմակերպությունը կազմալուծելու հարց բարձրացնել կուսակցության գործադիր մարմնի առջև:

7.6. Կուսակցության Երևան քաղաքի ՀՀԿ տարածքային կազմակերպությունների աշխատանքները համակարգում է ՀՀԿ գործադիր մարմնի անդամներից մեկը՝ գործադիր մարմնի որոշմամբ:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

8.1. Կուսակցության համագումարը կուսակցության բարձրագույն մարմինն է, որի ընդունած որոշումները պարտադիր են կուսակցության բոլոր մարմինների և անդամների համար: Կուսակցության համագումարում ընտրված և կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները հաշվետու են համագումարին:

8.2. Կուսակցության հերթական համագումարը հրավիրվում է կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի կողմից՝ օրենքով սահմանված ժամկետում:

8.3. Համագումարի պատվիրակներն առաջադրվում են սկզբնական կազմակերպությունների ժողովներում: Համագումարն իրավագոր է, եթե ներկա են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ: Կուսակցության կանոնադրության ու ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու (բացառությամբ օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների), ինչպես նաև կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Համագումարի որոշումները, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են բաց կամ գաղտնի քվեարկությամբ, համագումարին ներկա պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

Գաղտնի քվեարկությունն անցկացվում է համագումարին ներկա պատվիրակների առնվազն 1/3-ի պահանջով, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ որոշակի պաշտոնի համար առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ:

8.4. Արտահերթ համագումար կարող է հրավիրվել կուսակցության նախագահի առաջարկությամբ կամ ՀՀԿ անդամների 1/5-ի պահանջով՝ գործադիր մարմնի որոշմամբ:

8.5. Կուսակցության համագումարը՝

- լսում և հաստատում է կուսակցության նախագահի հաշվետվությունն իր և գործադիր մարմնի գործունեության մասին.
- քննարկում և հաստատում է կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և դրանցում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները.
- ընտրում է կուսակցության նախագահ.

- ընտրում է կուսակցության գործադիր մարմին.
- որոշում է կուսակցության ռազմավարական քաղաքական ուղին, կուսակցության նպատակների և խնդիրների իրագործման գործելակերպն ու իրականացման ուղղությունները.
- լսում և հաստատում է կուսակցության վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը.
- որոշում է վերստուգիչ հանձնաժողովի անդամների թիվը և ընտրում կուսակցության վերստուգիչ հանձնաժողով.
- որոշում է ընդունում կուսակցության վերակազմակերպման և (կամ) լուծարման մասին:

9. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

9.1. Կուսակցության նախագահն ընտրվում է համագումարի կողմից հերթական համագումարների միջև ընկած ժամանակահատվածով՝ ներկա (գրանցված) պատվիրակների ձայների մեծամասնությամբ: Կուսակցության նախագահի թեկնածություններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից: Եթե առաջադրվել են մեկից ավելի թեկնածուներ, ապա, գաղտնի քվեարկության արդյունքում ընտրված է համարվում համագումարի պատվիրակների առավել ձայներ ստացած թեկնածուն:

9.2. Կուսակցության նախագահի բացակայության դեպքում գործադիր մարմնի անդամներից մեկը կուսակցության նախագահի հանձնարարությամբ իրականացնում է կուսակցության նախագահի լիազորությունները:

9.3. Կուսակցության նախագահը՝

- իրականացնում է կուսակցության ընդհանուր ղեկավարումը.
- ներկայացնում է կուսակցությունը, նրա շահերը և դիրքորոշումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպությունների հետ ունեցած հարաբերություններում կամ այդ նպատակով լիազորում է կուսակցության այլ անդամների.
- ի պաշտոնե կուսակցության խորհրդի և գործադիր մարմնի անդամ է.
- հրավիրում է կուսակցության խորհրդի կամ գործադիր մարմնի նիստ.
- հերթական համագումարի հրավիրումից մեկ ամիս առաջ հրավիրում է կուսակցության գործադիր մարմնի նիստ, որտեղ որոշվում է համագումարի օրակարգի նախագիծը.

- ղեկավարում է կուսակցության գործադիր մարմնի աշխատանքները և նախագահում կուսակցության խորհրդի նիստը.
 - տնօրինում է կուսակցության գույքը և դրամական միջոցները.
 - հաստատում է (ստորագրում է) կուսակցության խորհրդի և գործադիր մարմնի որոշումները կուսակցության պաշտոնաթերթի և այլ պարբերականների հրատարակման մասին.
 - կազմավորում է իր աշխատակազմը.
 - կուսակցության անունից հաստատում (ստորագրում) է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.
 - կուսակցության գործադիր մարմնի անդամների կազմից կուսակցության խորհրդի հաստատմանն է ներկայացնում կուսակցության նախագահի առաջին տեղակալի, տեղակալների, կուսակցության հանձնաժողովների նախագահների, ինչպես նաև ՀՀԿ կանանց և երիտասարդության ոլորտային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունները.
 - սահմանում է կուսակցության նախագահի առաջին տեղակալի, տեղակալների կողմից անմիջականորեն համակարգվող ոլորտները.
 - կուսակցության խորհրդի հաստատմանն է ներկայացնում կուսակցության գործադիր մարմնի առաջարկները.
 - կուսակցության խորհրդի հաստատմանն է ներկայացնում կուսակցության գործադիր մարմնի հավանությանն արժանացած՝ Ազգային ժողովում և կառավարությունում քաղաքական պաշտոններում նշանակման կամ ընտրության ներկայացվող ՀՀԿ թեկնածուներին.
 - կուսակցության խորհրդի հաստատմանն է ներկայացնում կուսակցության ոլորտային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունները.
 - հաստատում և օրենքով սահմանված կարգով ու ժամկետում պետական լիազոր մարմնին է ներկայացնում կուսակցության ֆինանսական հաշվետվությունները.
 - Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է կուսակցության ֆինանսական և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները.
 - գործադիր մարմնի անդամների կազմից գործադիր մարմնի հաստատմանն է առաջադրում է կուսակցության Երևան քաղաքի ՀՀԿ տարածքային կազմակերպությունների աշխատանքները համակարգողի թեկնածությունը.
 - առաջադրում է ՀՀԿ ավագների խորհրդի նախագահի թեկնածությունը.
 - իրականացնում է սույն կանոնադրությամբ և կուսակցության համագումարի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:
- Կուսակցության պաշտոնական դիրքորոշումն արտահայտում են կուսակցության նախագահը և նրա առաջին տեղակալը, տեղակալները, ինչպես նաև նախագահի

հանձնարարությամբ՝ գործադիր մարմնի անդամները և Ազգային ժողովում ՀՀԿ խմբակցության ղեկավարը:

10. ԿՈՒՍԱԿԾՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

10.1. Կուսակցության ներկայացուցչական մարմինը կուսակցության խորհուրդն է:
Կուսակցության խորհրդում ի պաշտոնե ընդգրկվում են՝

- կուսակցության նախագահը.
- գործադիր մարմնի անդամները.
- կուսակցության անդամ պատգամավորները.
- կուսակցության անդամ կառավարության անդամները.
- կուսակցության տարածքային կազմակերպությունների խորհուրդների նախագահները, կուսակցության ոլորտային ստորաբաժանումների ղեկավարները:

10.2. Կուսակցության խորհուրդը կարող է համալրվել գործադիր մարմնի որոշմամբ: Կուսակցության խորհրդի անդամի լիազորությունները կարող է դադարեցվել գործադիր մարմնի որոշմամբ:

10.3. Կուսակցության խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է խորհրդի նիստերի հրավիրման, որոշումների ընդունման, դրանց և կուսակցության համագումարի որոշումների կատարման միջոցով:

10.4. Կուսակցության խորհրդի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան տարին երեք անգամ: Կուսակցության նախագահի, գործադիր մարմնի, ինչպես նաև խորհրդի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ նախատեսված օրակարգով կարող է հրավիրվել արտահերթ նիստ: Նիստն օրինական է, եթե ներկա է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

10.5. Կուսակցության խորհուրդը՝

- վերահսկում է իր որոշումների կատարումը.
- հաստատում է գործադիր մարմնի կողմից մշակված և ներկայացված՝ կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերի նախագծերը, կուսակցության մարտավարական սկզբունքները,
- կուսակցության անունից անում է հայտարարություններ և առաջարկություններ.
- հաստատում է Ազգային ժողովում ՀՀԿ խմբակցության գործունեության հիմնական ուղղությունները, լսում է գործադիր մարմնի տարեկան հաղորդումը.

- հաստատում է կուսակցության նախագահի կողմից առաջադրված կուսակցության նախագահի առաջին տեղակալի, տեղակալների, կուսակցության հանձնաժողովների նախագահների և ոլորտային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունները.
- կուսակցության նախագահի առաջարկությամբ, իր որոշմամբ ստեղծում է խորհրդակցական մարմնի կարգավիճակ ունեցող՝ ՀՀԿ ավագների խորհուրդ.
- հաստատում է կուսակցության նախագահի կողմից ներկայացված ՀՀԿ ավագների խորհրդի նախագահի թեկնածությունը.
- քննարկում և գործադիր մարմնի հաստատմանն է ներկայացնում Ազգային ժողովի ընտրություններում առաջադրված պատգամավորության թեկնածուներին.
- հաստատում է կուսակցության գործադիր մարմնի հավանությանն արժանացած կուսակցության նախընտրական ծրագիրը, Ազգային ժողովում և կառավարությունում քաղաքական պաշտոններում նշանակման կամ ընտրության ներկայացվող ՀՀԿ թեկնածուներին.
- որոշում է ընդունում Ազգային ժողովի ընտրություններին առնվազն երկու կուսակցության կողմից կուսակցությունների դաշինք կազմավորվելու մասին
- որոշում է կայացնում խորհրդարանական այլ ուժերի հետ դաշինք ստեղծելու մասին.
- որոշում է կայացնում այլ պետությունների քաղաքական կուսակցությունների հետ համագործակցելու, միջազգային միություններին և ասոցիացիաներին անդամագրվելու մասին.
- անհրաժեշտության դեպքում գործադիր մարմնի առաջարկությամբ լսում է կուսակցության տարածքային խորհուրդների հաշվետվությունները:

11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

11.1. Կուսակցության մշտական գործող ղեկավար մարմինը կուսակցության գործադիր մարմինն է, որն ընտրվում է կուսակցության համագումարում՝ հերթական համագումարների միջև ընկած ժամանակահատվածով: Գործադիր մարմնի անդամների թիվը որոշում է համագումարը: Գործադիր մարմնի անդամության թեկնածուներն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից:

- Գործադիր մարմնի անդամների ընտրությունը կատարվում է բաց կամ գաղտնի քվեարկությամբ: Ընտրված են համարվում համագումարի պատվիրակների առավել կողմ ձայներ ստացած թեկնածուները:

- Կուսակցության գործադիր մարմինն իր գործունեությունն իրականացնում է գործադիր մարմնի նիստերի, որոշումների ընդունման, դրանց և կուսակցության համագումարի որոշումների կատարման միջոցով:
- Կուսակցության գործադիր մարմնի նիստերը հրավիրվում են ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Կուսակցության նախագահի կամ գործադիր մարմնի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ կարող է հրավիրել արտահերթ նիստ: Նիստն օրինական է, եթե ներկա է գործադիր մարմնի անդամների առնվազն 2/3-ը:

11.2. Կուսակցության գործադիր մարմինը`

- կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է կուսակցության համագումարի որոշումների կատարման ընթացքը.
- հրավիրում է կուսակցության հերթական համագումար և նախապատրաստում դրա անցկացումը.
- որոշում է կայացնում համագումարի օրակարգի նախագիծը հաստատելու մասին.
- որոշում է համագումարի գումարման օրը, պատվիրակների ընտրության կարգը, ընդհանուր թիվը.
- հրավիրում է կուսակցության արտահերթ համագումար կուսակցության նախագահի առաջարկությամբ կամ ՀՀԿ անդամների 1/5-ի պահանջով.
- օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխություններ և լրացումներ է կատարում կանոնադրությունում և ծրագրում.
- որոշում է ընդունում համապետական և տարածքային ընտրական ցուցակները հաստատելու և առաջադրելու վերաբերյալ.
- հավանություն է տալիս Ազգային ժողովում և կառավարությունում քաղաքական պաշտոններում նշանակման կամ ընտրության ներկայացվող ՀՀԿ թեկնածուներին.
- քննարկում է կուսակցության նախընտրական ծրագիրը և ներկայացնում խորհրդի հաստատմանը.
- քննարկում և լուծում է կուսակցության ընթացիկ գործունեությանն առնչվող խնդիրները.
- մշակում և խորհրդի քննարկմանն է ներկայացնում կուսակցության գաղափարախոսական հիմնադրությունները, կանոնադրական, ծրագրային և կուսակցության ռազմավարությանն առնչվող փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև կուսակցության մարտավարական սկզբունքները.
- վերահսկում է կուսակցության տարածքային, շրջանային, սկզբնական կազմակերպությունների և ոլորտային ստորաբաժանումների աշխատանքները.

- տարին մեկ անգամ հաղորդում է ներկայացնում կուսակցության խորհրդին՝ իր գործունեության վերաբերյալ.
- առանձին դեպքերում որոշում է կայացնում օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցության դիրքորոշման մասին.
- որոշում է ընդունում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ավագանու ընտրություններում թեկնածուներ առաջադրելու մասին.
- որոշում է ընդունում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին միայնակ(դաշինքով)մասնակցելու մասին՝ հաշվի առնելով կուսակցության անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները.
- ընդունում է ներկուսակցական ակտեր (որոշում, կարգադրություն, հանձնարարական, հրահանգ, հայտարարություն, ցուցում և այլն), բացառությամբ՝ համագումարի կամ խորհրդի իրավասությանը վերապահված ակտերի.
- որոշում է կայացնում խորհրդի արտահերթ նիստ գումարելու մասին.
- որոշում է կայացնում տարածքային, շրջանային կամ սկզբնական կազմակերպությունների արտահերթ նիստեր (ժողովներ) հրավիրելու և նիստերում (ժողովներում) պարտադիր քննարկման ենթակա հարցերի մասին.
- կուսակցության նախագահի առաջարկությամբ, իր որոշմամբ կարող է ստեղծել (կազմալուծել) կուսակցության ոլորտային ստորաբաժանումներ, որոնք համակարգում են համապատասխան ոլորտներում կուսակցության գործունեությունը.
- կուսակցության նախագահի առաջարկությամբ որոշում է կայացնում կուսակցության Երևան քաղաքի ՀՀԿ տարածքային կազմակերպությունների աշխատանքները համակարգողի թեկնածությունը հաստատելու մասին.
- անհրաժեշտության կամ բողոքարկման դեպքերում կարող է վերանայել կուսակցության կառույցների որոշումները.
- անհրաժեշտության դեպքում ստեղծում է շրջանային կազմակերպություն.
- կուսակցության տարածքային խորհրդի առաջարկությամբ կարող է կազմալուծել կուսակցության շրջանային կազմակերպությունը.
- սահմանում է շրջանային կազմակերպության գործունեության տարածքային տիրույթը.
- իր նախաձեռնությամբ՝ կուսակցության նախագահի համաձայնությամբ կարող է կազմալուծել կուսակցության տարածքային կազմակերպությունը.

- լսում է կուսակցության տարածքային խորհուրդների տարեկան հաշվետվությունները.
- կուսակցության անունից անում է հայտարարություններ.
- համակարգում և հսկողություն է իրականացնում կուսակցության լրատվամիջոցների և հրատարակչական ծառայությունների գործունեության նկատմամբ.
- որոշում է կայացնում կուսակցության գործունեության բոլոր այն հարցերի շուրջ, որոնք կանոնադրությամբ վերապահված չեն կուսակցության համագումարի, նախագահի կամ խորհրդի բացառիկ իրավասությանը.
- իրականացնում է կուսակցության՝ որպես իրավաբանական անձի, լիազորությունները.
- հաստատում է կուսակցության գույքի կառավարման կարգը և դրամական ծախսերի նախահաշիվը.
- սահմանում է անդամավճարների գանձման կարգը.
- թույլատրում է պատրաստել հուշանվերներ՝ ՀՀԿ խորհրդանշանի պատկերով, ինչպես նաև սահմանում կուսակցության հուշամեդալներ և դրանց տրման կարգը.
- հաշվետու է համագումարին:

12. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

12.1. Կուսակցության ֆինանսական գործունեության վերահսկման նպատակով համագումարի կողմից հերթական համագումարների միջև ընկած ժամանակահատվածով ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով:

12.2. Վերստուգիչ հանձնաժողովի անդամը չի կարող միաժամանակ լինել կուսակցության գործադիր մարմնի և խորհրդի անդամ, կուսակցության տարածքային ու ոլորտային ստորաբաժանումների ղեկավար:

12.3. Վերստուգիչ հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են հանձնաժողովի նախագահ:

12.4. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է կուսակցության համագումարին:

12.5. Վերստուգիչ հանձնաժողովը՝

- վերահսկողություն է իրականացնում կուսակցության, կուսակցության տարածքային ստորաբաժանումների ընդհանուր և ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ: Կուսակցության տարածքային ստորաբաժանումներում առանձին վերահսկողություն իրականացնող մարմիններ չեն ձևավորվում:

- վերահսկում է կուսակցության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները.
- ստուգում է դրամական միջոցների մուտքերի և ելքերի օրինականությունը.
- վերահսկում է կուսակցության գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման գործընթացները.
- ստուգում է կուսակցության գույքի հետ կապված գործընթացները:

13. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

13.1. Կուսակցության սեփականությունը, այդ թվում՝ ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, փոխադրական միջոցներ և այլ գույք, գոյանում են՝ նվիրատվությունից, սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

13.2. Կուսակցության կողմից ստացված, ինչպես նաև նրա սեփական միջոցների հաշվին ստեղծված և (կամ) ձեռք բերված գույքի սեփականատերը կուսակցությունն է:

13.3. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները կուսակցության գույքը տիրապետում և օգտագործում են գործադիր մարմնի կողմից նախատեսված սահմաններում ու կարգով:

13.4. Դրամական միջոցները ձևավորվում են անդամավճարներից, օրենքով նախատեսված նվիրատվություններից, օրենքով նախատեսված բյուջետային ֆինանսավորումից, քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից:

13.5. Կուսակցության գույքը և դրամական միջոցները տնօրինում է կուսակցության նախագահը կամ նրա կողմից լիազորվելու դեպքում կարող է տնօրինել կուսակցության գործադիր մարմնի անդամներից մեկը՝ ըստ կուսակցության գործադիր մարմնի կողմից հաստատված նախահաշվի և կարգի:

14. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1. Կուսակցության վերակազմակերպումը կարող է կատարվել կուսակցության համագումարի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կուսակցությունը կարող է վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել, առանձնանալ) միայն այլ կուսակցության:

14.2 Կուսակցության վերակազմակերպման դեպքում նրա իրավունքներն ու պարատականությունները բաշխվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին համապատասխան:

14.3. Կուսակցության վերակազմակերպման նախաձեռնությամբ կարող է հանդես գալ կուսակցության գործադիր մարմինը կամ կուսակցության համագումարի

պատվիրակների առնվազն 1/3-ը՝ գրավոր պահանջով:

14.4. Կուսակցության վերակազմակերպման մասին որոշումն ընդունվում է կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

14.5. Կուսակցությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և օրենքով սահմանված կարգով:

Կուսակցության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո կուսակցության գույքը տնօրինվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կուսակցության դատական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը:

14.6. Կուսակցության գործունեությունը Սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվելու դեպքում, Կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց:

Այդ դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն իրականացնում է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից ստեղծված հանձնաժողովը և լուծարումից հետո կուսակցության մնացած գույքը փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ օրենքով սահմանված կարգով:

14.6. Կուսակցությունը կարող է դադարեցնել իր գործունեությունը լուծարման միջոցով՝ համագումարի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: